

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Քիֆիլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиς, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն).
Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Ր Գ Ի Ր Ա Ր Մ Ր Ո Ւ Ն Ի

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻՍՎԱՆԻՆ

23-ՐԿ ՏԱՐԻ ՄՇԱԿ 23-ՐԿ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակի Քիֆիլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մեր ստանում ենք սեփական ՀեՌԱԳԻՐՆԵՐ:

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԿԵՆ ՍԿՍՎԱԾ Է:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը՝ 6 ռուբլի, ամսական՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ՄՐԱՎԱԿԱՆՆԵՐ (Բաղարնայա և Բարոնակայա փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ճրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքահայերի հարցը. Հասարակաց սնունդ.—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կօլեզիայ սկզբունքը. Նա-
մակ վերին-Ազգութիւնը. Նամակ խմբագրութեան.
Ներքին լուրեր.— ԱՐՄԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արդու-
րէզակ բէլ լճործում. Չինա-հապանական պատե-
րագիր. Նամակ Պարսկաստանից.— ՀեՌԱԳԻՐՆԵՐ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մա-
տենագրութիւն.

ԹԻՐԻՔԱԿԱՆ ԶԱՐԳԸ

Թիւրքահայերի ծանր և լարված վիճակի
մասին Կ. Պոլսից և Լճործից հաղորդված
են մի շարք հետաքրքրական հեռագրեր, որ
ահա առաջ ենք բերում:

Լճործից Պետերբուրգի լրագրիներին հե-
ռագրում են. «Կ. Պոլսից ստացված տեղե-
կութիւնները համեմատ, սուլթանը մի
յանձնաժողով նշանակեց, որը պէտք է
անյապաղ տեղն ու տեղը բնի այն խոս-
վութիւնները, որ առաջ են բերել քիւրդերը
Հայաստանում»:

Լճործից «НОВОСТИ» լրագրին հեռա-
գրում են, որ Անգլիան առաջադրութիւն-
ներ արաւ Բ. Կրանը Հայաստանում տեղի
ունեցող խառնակութիւնների և բռնու-
թիւնների առիթով:

«Բյւսերի» գործակալութեանը Կ. Պոլսից
հեռագրում են. «Բրիտանական զեւսակնի
եռանդուն առաջադրութիւնների պատճա-
ռով»:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Պրոֆէսոր Մարրի նոր աշխատու-
թիւնը:

Երիտասարդ գիտնական Մարրը «Византийский
Временник» հանդէսի այս տարվայ երկրորդ
համարում գիտնել է մի ընդարձակ յօդուած, ա-
ւելի քան 40 մեծագիւր երեսներ, «Անտուանի հա-
յոց նախնական պատմութեան մասին», որի մէջ
ընտելեան է աւելում Մովսէս Խորենացու պատ-
մութեան աղբիւրները, մանաւանդ հուշակատար
Մարաբանան աղբիւրը:

Յօդուածի սկզբում պրոֆէսոր Մարրը համա-
ռօտիւ մէջ է բերում Քրանսիայի հայազեւս կար-
բիէրի վերջին ուսումնասիրութեան էական կէտե-
քը, որոնց վրա հիմնված կարբիէր Խորենացու
պատմութիւնը համարում է գրված 8-րդ դարից
օչ առաջ, հակառակ մինչև այժմ ընդհանուր ե-

սով Բ. Կուսը յետ վերցրեց Վանի բրիտա-
նական փոխ-հիւպատոսի վրա բարգաձ մե-
ղադրանքները, որ իբր թէ նա, այսինքն
անգլիական փոխ-հիւպատոսն էր զբոսում
հայերին ապստամբելը»:

Պետերբուրգից «Новое Обозрение» լր-
ագրի թղթակիցը հեռագրում է նոյնքն-
րի 12-ից. «Լճործից հեռագրում են
«Новое Время» լրագրին, թէ այստեղի
Հայաստանը մտադիր են գիծել Բագու-
հուն խնդրի, որ նա սուլթանին չը
նուիրէ ծնկակապի շքանշանը, մինչև որ
Թիւրքիայի հալածված հայերին բաւարար-
ութիւն չը տրվի»:

Պետերբուրգի նոյն լրագիրը հաղորդում է,
որ անգլիական Հայաստանները միջնորդում
են, որպէս զի Անգլիան խնդրի Ռուսաս-
տանից միասին գործել հայկական հար-
ցում, կամ թէ չէ Անգլիան հրաժար-
վի 1878 թիւ անգլո-թիւրքական դաշ-
նագրից»:

ՀԱՍԱՐԱԿՈՅ ՄՆՈՒՆԻՐ

Մի ժողովրդի ֆիզիքական ոյժի գլխա-
ւոր հիմքը և պայմանը նրա սնունդն է:
Եթէ վատ է սնունդը, եթէ անբաւարար
են այն նիւթերը, որոնք ծառայում են
իրեն կերակուր, այն ժամանակ վատ, թոյլ
և անբաւարար է ֆիզիքական ամբողջ բա-
րեկեցութիւնը:

շած հանդման, թէ այդ պատմութիւնը գրված է
5-րդ դարի վերջերս» և Մերսուլի աշակերտ
Մ. Խորենացու ձեռքով:

Պրոֆէսոր Մարրը առանց մանրամասն քննու-
թեան մէջ մտնելու, նոյն իսկ ընդունելով, որ
կարբիէրի բերած փաստերը շատ ծանրակշիւ են,
իր կողմից բաւականանում է մի քանի համառօտ,
բայց շատ էական աւարկութիւններ անելով նրա
դէմ: Նա կարիք էլ չէ գտնում մի առ մի պա-
տասխանելու կարբիէրի փաստերին, որովհետև ի-
րաւացի կերպով նկատում է, որ Խորենացու
պատմութիւնը մի քանի դար յետ չարտելու հա-
մար հարկաւոր է նախապէս ընդարձակ, բազ-
մակողմանի ուսումնասիրութիւն նրա պատ-
մութեան և աղբիւրների մասին, որ մինչև այժմ
կատարված չէ գոհացուցիչ կերպով: Խորենացու
և 8-րդ դարի մի յոյն պատմագիր մէջ մի և նոյն
հատուածը տեսնելով և ապացուցանելով, որ յոյ-
նը փոխ չէ առել այդ հատուածը Խորենացուց՝
զեռ դժուար է եզրակացնել, թէ ուրեմն Խորե-
նացին է առել նրան յոյնից, ուրեմն և Խորենա-
ցին 8-րդ դարի պատմագիր է: Որովհետև ուրիշ
աւելի հաւանական լուծում կայ այդ առեղծուածին
— այսինքն՝ որ Խորենացին և այդ յոյնը օգտ-

Մեր ժողովուրդը, որ առաջ բաւականա-
չափ մաքուր ցորեն և գանազան ընդդէմ-
ներ ուներ իր սնունդի համար, այժմ օրից
օր աւելի ու աւելի սկսում է աղքատաց-
նել իր սնունդը, գրկելով իրան ընդդէմ-
ներից ցորենը փոխարինելով զարիով և
կորեկով, շատ տեղերում նուազեցնելով նոյն
իսկ կերակրի քանակութիւնը մինչև քաղ-
ցած մնալու աստիճանը: Մի քանի տեղե-
րում, ինչպէս Բօջազովում և Փամբակում,
նա ինչպէս է որոմները դէն զցել և
կերակրում է այնպիսի հացով, որ հի-
ւանդութիւնների պատճառ է դառնում և
թուլացնում է բանուրի ոյժը:

Կեռ քանի գիւղացին կերակրում է իր
արգիւններով հացահատիկներով, նա յա-
մենայն դէպս գտնէ իր հացի յատկութիւ-
նը, և եթէ նա չէ մաքրում հացը թեփից
կամ օտար խառնուրդներից, այդ նա ա-
նում է զիտութեամբ, ցանկանալով ունե-
նալ աւելի մեծ քանակութեամբ պաշար:
Բայց երբ նա ստիպված է ալիւր գնել
վաճառանոցից, նա այդպէս արդէն ընդ-
նում է անկանելի վիճակի մէջ, որովհետև
նա կարողութիւն չունի որոշելու նրա յառ-
կութիւնը ճիշդ կերպով:

Նոյն դրութեան մէջ է և քաղաքների
ժողովուրդը, որ ստիպված է գնել ամեն
տեսակ խառնուրդներից բաղկացած նիւ-
թեր իր սնունդի համար, անկարող լինելով
որոշել մաքուրը և հարազատը զանազան
տեսակ կեղծիքներից:

Բայց աւելի քան հացը՝ զանազան խար-
դախութիւնների և կեղծիքների են մատն-
ված հասարակաց սնունդի համար ծա-
ռայող բազմաթիւ ուրիշ առարկաներ, ինչ-
պէս են իւրը, կաթը, պատրաստի պաշար-
ները, զինին, ձուկը, սուրճը, ընդդէմները
և այլն: Կեղծիքու անբարեկեցութիւնը այն
աստիճանին է հասնում, որ մարդ կարող
է հարցնել, թէ արդե՞ք կայ նիւթ, կայ
առարկայ, որ վաճառվում լինի իր բնա-
կան կերպարանքով, այնպէս, ինչպէս նա
պէտք է լինի:

Հասարակաց սնունդի վիճակը այնպէս
աննշան մի խնդիր է, որ հասարակութիւ-
նը և զիտութիւնը թողնեն նրան առանց
ուշադրութեան: Այն երկրներում, որոնք
մեզինց աւելի զարգացել են, վարուց է
յարուցված այդ խնդիրը և փորձեր են
արված կուէրու կեղծիքու անբարեկեց-
ւութեան դէմ՝ և հոգ տանելու թարմ
ու մաքուր միջոցներ ունենալու համար:

վել են մի ընդհանուր հին, դեռ չը հետազօտված

աղբիւրից:

Թէ Խորենացին իբրև աղբիւր ունեցել է և ա-
տորեքն, կամ ատորեքնից հայերն թարգմանված
աղբիւրներ՝ նա ապացուցանում է համոզիչ կեր-
պով. այն ինչ մինչև այժմ ուշք չէր դարձված
ատորեքն հին մատենագրութեան վրա՝ իբրև
Խորենացու աղբիւր. իսկ մինչև Խորենացու բո-
լոր աղբիւրները չը քննվեն՝ վերջնական եզրա-
կացութիւն անել չէ կարելի: Ահա այսպիսի մի
աղբիւրի, այսինքն Մարաբանան աղբիւրի քննու-
թեան է նուիրված յօդուածի յաջորդ մասը:

Յայտնի է, որ Խորենացին իր պատմութեան
Ա. գրքի և Բ. սկզբի * աղբիւր է ներկայաց-
նում Մար-Աբաս կատինա ասորու, որ իբր թէ
Վաղարշապի հրամանով (150 տարի Գրիստոսից
առաջ) գնացել է Նինուէ և այնտեղի զբաղան
մի յունարէն գրքից քաղել հանել է հայոց նախ-

* Միաբանը իր «Խորենացու ուսումնասիրու-
թիւններէ» մէջ (Արարատ, 1891) ցոյց տուեց
նոյն իսկ Խորենացու բնագրի վկայութեամբ, թէ
Ա. գրքը և Բ. սկզբը ամբողջապէս Մար-Աբա-
սից չէ առել պատմագիրը, այլ ուրիշ աղբիւրներից
էլ և թէ Մար-Աբաս հազիւ մի երրորդ մասն է
կազմում միւս աղբիւրների մէջ:

Մի կողմից հիմնել են սանիտարական հրա-
կոզութիւն և քիմիական լաբորատորիաներ՝
վաճառանոցում ծախվող միջոցների հե-
տազօտութեան համար, իսկ միւս կողմից
կազմակերպել են առանձին ընկերակցութիւն-
ներ և հաւաքական ոյժով ձեռնարկել են
այնպիսի պահեստների, որոնք անմիջական
կապ ունեն արդիւնագործողների հետ և
կարողանում են ժողովել թարմ և մաքուր
կերակրանքներ:

Կովկասում սանիտարական հսկողութիւ-
նը դեռ շատ ստոր աստիճանի վրա է: Մեր
վաճառանոցներում ամեն տեսակ փոած,
իչացած, հոտած նիւթեր վաճառվում են
և շատ քիչ դէպքերում են արգելքի հան-
դիպում վաճառութեան կողմից:

Թիֆլիսը, որ դեռ ունի հնարարու-
թիւն թէ մամուլի, թէ վարչական մար-
մինների և թէ իր նոր հիմնած լաբորա-
տորիայի միջոցով փոքր ի շատ օգնել սա-
նիտարական հսկողութեան շատ անբաւար-
ար է այս դրժում: Իսկ մեր երկրի միւս
մասերը մատնված են այդ կողմից անփոյթ
մոռացութեան:

Հասարակութիւնը ինքը պէտք է այդ
խնդրին տայ այն նշանակութիւնը, որին
նա արժանի է, և օգնի վարչական մարմին-
ներին կուէրու ուսելիքները և խմելիք-
ները կեղծելու և խարդախելու վնասակար
սովորութեան դէմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՒՆԳԻՒՄ ՍԿՋՈՒՆԸ

II.

1836 թ.ի պիտոմիայով հայոց եկեղեցու
զլխաւոր կառավարութիւնը, և հայ հոգևորական-
ների, ինչպէս և եկեղեցու կանոնների և ձեւերի
ճիշդ կատարման վրա ամենաբարձր հսկողութիւ-
նը յատկացրված է կաթողիկոսին, որին ամեն
բանում օգնում է սինդը (յոյ. 914):

Սակայն մեռաւ օրհնելը, եպիսկոպոս ձեռնադ-
րելը, առաքինի և օգտակար հոգեօրականներին
պարգևատրելը, կոնդակներ ուղարկելը, «Եկեղե-
ցական ճիշդ կանոնների հիման վրա» էլ միայն
վանքի դործերի կարգադրութիւնը, էլ միայն
սեմինարիայի կառավարութիւնը, սինդի
համար անդամ և թեմերի համար առաջնորդան
առաջարկելը բարձրագոյն հաստատութեան—այդ
ամենը կաթողիկոսին վերապահած իրաւունքներ
են ջուտ կրօնական, դասնաբանական—ծիսա-

նական (հայկազեան) պատմութիւնը: Վաղարշակ
այս պատմութիւնը իբրև թանգազին գանձ դրել
է իր դիւանում, իսկ մի մասն էլ փորագրել է
տուել արձանի վրա Մծբինում, որից (որոշ չէ—
արձանից թէ բուն դիւանի պատմութիւնից) Խո-
րենացին առել է իր պատմութեան նիւթերը:
Բանասէրները քննելով Խորենացու այս աւանդա-
ծը Մարաբանի մասին և տեսնելով նրա մէջ ան-
հեթեթութիւններ՝ եկան այն եզրակացութեան,
թէ Խորենացու այս պատմածը չինձու է, Խորե-
նացին ստում է, յետոյ ուրիշ ուսումնասիրու-
թիւններից հետեցրին, թէ Խորենացին և Մարա-
բար նոյնն են, թէ Խորենացին ինքն է նախկ
այդ անունը և առասպելը՝ որպէս զի իր պատ-
մութեան արժէքն աւելցնէ և այլն:

Խորենացու անողք և բազմաձուտ ուսումնա-
սիրողներից մէկը, Գուտչիւտ առաջին անգամ ու-
շադրութիւն դարձրեց մի պատմական հատուածի
վրա, որ տպված է Սեդէոսի (7-րդ դար) պատ-
մութեան սկզբում, բայց անհայտնի է, որ նրա-
նը չէ: Այս հատուածում պատմված է Հայկի և
Բէլի պատմութիւնը, Հայկի սերունդը, Արայի և
Շամիրամի վէպը և այլն, և վերջը գրված է երկու
ցուցակ, մէկը Պարթեաց թագաւորների, սկզբից

կան խնդիրներում թէև կաթողիկոսը կանխօրէն պետք է լսի սինոդի կարծիքը, բայց վճռական ձայնը իրան կաթողիկոսինն է: Այլ խնդիրներում սինոդում կաթողիկոսի ձայնը կօլլեգիալ հաստատութիւնների մէջ ընդունվում նախագահական ձայնի նշանակութիւն ունի (յօդ. 929, 943):

Իբրև կարգադրիչ կառավարող, վերահսկող, քննող, պատժող և հողեր կոչման արժանացնող բարձրագոյն ատեն՝ համարվում է սինոդը: Ռուսաստանի 6 թեմերից իւրաքանչիւրը կառավարվում է թեմական առաջնորդների միջոցով, որոնց օգնում են կոնսիստորիաները, որոնք նոյնպէս կօլլեգիալ հաստատութիւններ են: Առաջնորդը իր թեմի հողերը գլխաւոր պաշտօնեան է և ներկայացուցիչը, և իբրև այդպիսին՝ նա պատասխանատու է կառավարութեան և հողեր իշխանութեան առաջ: Նա պետք է օրինակ լինի քրիստոնէական և քաղաքացիական առաքելութիւնների (յօդ. 967, 970, 972), պարտաւոր է քրիստոնէական ոգուն համապատասխան հեղուկեամբ գործել, իւրաքանչիւր տարի պետք է իր գործունէութեան հաշիւը ապ սինոդին (յօդ. 978, 979): Առաջնորդը կախկիտութիւն իրաւունքն է սարկաւազ, քանակայ, վարդապետ ձեռնադրելու ծիսակատարութիւնը (ոչ ընտրութիւնը), կոնսիստորիայի համար անդամներ նշանակելը, սինոդի գիտութեամբ: Այլ բոլոր գործերում նա կոնսիստորիայի միջոցով է կարգադրութիւններ անում, իբրև նախագահ այդ հաստատութեան:

Կառավարական պաշտպանները հրճուանքով միշտ շնչում են 967-ը յօդուածի վրա, որին տալիս են մի անհեթեթ իմաստ, իբրև թէ «լիակատար հողեր պետք է պատասխանատու թեմի կառավարութեան համար կառավարութեան և հողեր իշխանութեան առաջ» նշանակում է, որ նրանք անասման տէր են թեմի և ինչ ուղեան կարող են անել, բոլորովին ուշք չը դարձնելով օրէնքի, կանոնադրութիւնների վրա:

Այդ մի և նոյն է թէ «նահանգապետին» յատկացնել անասման իշխանութիւն՝ նահանգում և ասել, թէ նա փոխանակ օրինակականութեան վերահսկող և իրաւորող լինելու, ինքն պետք է եղած օրէնքների, կանոնների, հրահանգների սահմաններից դուրս գալ, իր կամքը օրէնք հրատարակի և խախտի կօլլեգիալ հիմնարկութիւնների և այլ պաշտօնեաների իրաւունքները: Եթէ այդպէս լինէր, գոյութիւն չէին ունենայ համապատասխան օրէնքներ, այլ կապալով կը յանձնվէին թեմերը, որ առաջնորդները ինչ ուղեան անեն:

Ոչ Ռուսաստանում ամեն մի մարդ պետք է յարգի օրէնքը և ուրիշ իրաւունքը, պաշտօնեան իր ամեն մի գործողութիւնը պետք է օրինական սահմաններում զնի, իշխանազանցութիւնը յանցանք է: Ով կոչված է պատասխանատու, վերահսկող լինելու յարանի համար, նա աւելի ևս խիստ պետք է յարգի օրէնքը և կանոնները: Մասնաւորով մեր խօսքը մեր թեմական զբարոյների վերաբերելով, մենք տեսնում ենք, որ կան որոշ օրէնքներ, որոնք կառավարականութիւնների առաջն առնելու համար են գրված: 938, 985 և 1004 յօդուածները պարզ ցոյց են տալիս, որ թեմական առաջնորդները լիազօրութիւն չունեն

թեմական զարդաների նկատմամբ: Կառավարականութեան խնդիրները իրանց յոյր բացի 967-ը յօդուածից զնում են և 1003-ը յօդուածի վրա: Զարմանալի վարմունք. епархіальное начальство և епархіальный начальник նրանք մի և նոյն են համարում, թէև տարբեր կերպով պետք է հասկանալ և տարբեր մտքով է գործածվում նոյն իսկ պօլոժէնիայում: Губернское правление և губернаторъ միմէ մի և նոյն է: Եթէ օրէնքը ուղեւար, որ սեմինարիաները ամբողջապէս յանձնված լինեն առաջնորդների լիազօրութեան, չէր ասի. «семинарии зависят отъ своихъ епархіальныхъ начальствъ» (այլ начальниковъ): Բացի դրանից այդ 938 յօդուածում՝ Չիքա իր ասի. «к кругу дѣйствія синода по части распорядительной принадлежить надзоръ за благоустройствомъ семинарій» (938): Սակայն ամենազլլաւորը 1004 յօդուածն է, որ իրաւունք է տալիս ասել, որ այժմ հոգաբարձութիւնը սեմինարիաների նկատմամբ պօլոժէնիայի «епархіальное начальство»-ն է. (առաջնորդի նախադասութեամբ): Եւ անա ինչու:

Մինչև 1860 թ. կարգը մեր թեմական զարդաների կառավարութիւնը կոնսիստորիաների ձեռնարկն էր, որ է «епархіальное начальство» (985), բայց 1004 յօդուածով 1836 թ. ին կարելի է ասել նախատեսված էր, որ այդ ժամանակաւոր էր այդպէս.

«Курсъ ученія и весь внутренній порядокъ въ армяно-григоріанскихъ духовныхъ семинаріяхъ опредѣляются особыми правилами, составленными духовными начальствами сихъ семинарій, подъ надзоромъ и руководствомъ архіепископовъ, разсмотрѣнными еміадзинскимъ армяно-григоріанскимъ синодомъ...»

Մրանից պարզ, կարծում ենք, ոչինչ չէ կարող լինել: Միայն 60-ական թ. կանոններին, Մատթէոս կաթողիկոսի օրով, իրականացան այդ առանձին կանոնները, որոնցից Շուշու և Երևանի թեմական զարդաներին հաստատած են, բացի կաթողիկոսական կոնցրեցիաներից, և սինոդի կողմից: Ինչպէս եկեղեցական գործերում, նոյնպէս և հողեր զարդաների կառավարութեան գործում, իբրև հիմք, ընդունված է հայոց եկեղեցու լայն, ընտրողական սկզբունքը: Ինչպիսիները ընտրում են իրանց ներկայացուցիչները, որոնք, համաձայն կանոնադրութեան, ընտրում են հոգաբարձուներ, որոնք և յանձնվում է զարդան կառավարութիւնը: Սկզբում թեմական զարդաների հոգաբարձուները մի և նոյն ժամանակ հոգաբարձու էին և թեմի այլ հողեր-ծխական զարդաների համար, այնպէս որ թեմի օւսումնարանների նկատմամբ կատարելագոյն համապատասխանում էին «епархіальное начальство» տէլոժիմի: Հոգաբարձութիւնը կօլլեգիալ հաստատութիւն է, նախագահութեամբ թեմական առաջնորդի, որը առանձին, անկախ հոգաբարձութիւնից, ոչ մի անձնիշխան իրաւունք չունի զարդանի նկատմամբ: Հոգաբարձութիւնը զանազանվում է միւս սովորական կօլլեգիալ հաստատութիւններից (օրինակ, կոնսիստորիա, սինոդ) նրանով, որ նրան նախագահները ընտրվում են և ոչ թէ նշանակվում:

Մենք հարկ համարեցինք մասնաւորել և մեր յօդուածը վերջացնել թեմական զարդաներով, որովհետև կառավարականութեան խնդիրները, կորցնելով ժողովրդի համակրութիւնը, այժմ իրականացութեան վրա և աշխատում են պղտորել ամեն բան, որ չձուլ որան, սակայն օրինակ անուշիկի վերջի վերջը կը ստիպի յարգել ոչ միայն հոգաբարձութիւնների, մանկավարժական ժողովների, ուսուցիչների իրաւունքները, այլ և վերջ կը զնէ ամեն տեսակ խաօսին, որի մէջ կը խեղդվին իրանք խաօս ստեղծողները: Կենսաբան չի կանգնի այդ տեսակ խոչընդոտների առաջ...»

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒՎԻՍԻՑ

Հոկտեմբերի 26-ին
Ներկայումս այստեղ է գտնվում Նախիջևանի յաջորդ Արսէն վարդապետ Ղըլտեմանց, որը եկել է ծանօթանալու իր յաջորդութեան յայտնի կենտրոնի հետ: Ժողովրդի հասկացող մասը շատ ուրախ է վարդապետի գալու համար, որովհետև շատ եկեղեցական կնճառ հաշիւներ կան, որոնք սպասում են մի լուրջ և անապա մարդու, որպէս զի ստանան իրանց վերջնական վճիռը: Մի շարք է արդէն, որ Արսէն վարդապետը պտտում է եկեղեցիները և ծանօթանում է նրանց ներքին բարեկարգութեան հետ, իսկ ծխականների ներկայացուցիչներից ժողովներ կազմելով, նրանց ներկայութեամբ հաշիւ է պահանջում երեցիկներից և ով զարմանք, ինչ է տեսնում մի բան, որ ամենին պատիւ չէ բերում աղուցիցիներին:

Մեր խօսքը եկեղեցիները անշուք պահելու մասին չէ, ոչ ազուլեցին իր յոյակագ, շքեղ և պայծառ եկեղեցիներով կարող է պարծննայ: Տան մէկ եկեղեցուց միայն երեքն են, որոնք ծուխ չունենալու պատճառով մատնված են անուշաղորդութեան: Սակայն այդ յոյակագ եկեղեցիները այժմ ներկայացնում են Տօրիչիւնան դատարկութիւն, չունեն յաճախողներ, զուրկ են կանոնաւոր երեցիկներին, նոյն իսկ կայ այնպիսի մի, որ սեփական քանակ չունի և կառավարվում է միւս եկեղեցու քանակաւոր: Սակայն խօսքը զբանց այդ առաւելութիւնների կամ պակասութիւնների մասին չէ, այլ երեցիկների, ներանց հաշուեւորութեան և ծխականների դէպի եկեղեցու վիճակը ունեցած պարտականութեան մասին: Բանից երևում է, որ նուրց սովորութիւն է, որ երեցիկները ընտրվում են ժողովրդից և առանց հաստատվելու, կառավարում են մինչև իրանց հրատարակելու, բացառութիւն կազմում են ս. Քրիստափոր եկեղեցու երեցիկներ և վերջին ժամանակս էլ ս. Յովհաննէս և ս. Դմառն եկեղեցիների երեցիկները, որոնցից մէկը հաստատված է, իսկ միւրը անաշարկված է հաստատութեան: Երեցիկներ ընտրվում է անորոշ ժամանակով, իւրաքանչիւրը թողնում է այդ պաշտօնը, երբ բարեհաճում է, կամ երբ հարկաւոր է լինում օտարութեան գնալ: Վերջին դէպքում, առանց ժողովրդին իմաց տալու, յանձնվում է

կամ եղբորը և կամ բարեկամին կառավարելու: Եւ իր հեռանալուց յետոյ նոյն կերպով է վարվում երեցիկների հաշիւները ստուգելու համար հաշուեւորները չը կան և երբեք էլ չեն եղել մեր վիճակում: Հաշիւները պահում են անկանոն, իսկ գումարների հետ վարվում են միանգամայն անփոյթ կերպով:

Շնորհի այդ անտարբերութեան շատ անգամ երեցիկներ են ընտրվել այնպիսի անձնաւորութիւններ, որոնք տարիներ ընթացքում անբարեխիղճ կերպով են վարվել եկեղեցական գումարների հետ, և ոչ միայն չեն աւելացրել, այլ և եղածները չափեցնելու մտքով, երբեմն էլ առանց թղթի, տուկ են այնպիսի անձնաւորութիւններին, որոնցից այսօր անկարող են մի կօպէկ անգամ առանալ: Այդ տեսակ գումարներից մի քանիսը, շնորհի յաջորդի, կորստից ազատվել են:

Եւ շնորհի երեցիկների այդ տեսակ ընտրութեան, ոչ միայն տուժել են եկեղեցիները, այլ և ուսումնարանները, որովհետև վերջինները, համաձայն հողեր իշխանութեան կարգադրութեան, ստանում էին եկեղեցիներից 300 բուրլու: Բայց անա մի քանի տարի էր, ինչ եկեղեցիներից մի քանիսը չէին կարողանում պարբեր տալ և մնացել էր ապառիկ: Արսէն վարդապետը, ի ժողով ծանօթանալով գումարական վիճակի հետ, գտաւ որ իրօք անկարող են ներկայումս բարդված ապառիկները վճարել զարդաներին, ուստի այդ բոլոր վերջացրել մի յայտնի գումարով, իսկ այնուհետև պատուիրեց վճարել տարեկան 50 բուրլու փոխարէն 30 է: Բացի դրանից նկատելով, որ մի քանի եկեղեցիների գումարները արված են այս կամ այն անձնաւորութեան անհաստատ պայմանով, անձամբ նրանցից մօտակերպ լաւա, իսկ մի քանիսների ժամանակը, որ լրացել էր և թղթեղը չէին նորոգել, ինքն նորոգեց և պատուիրեց, որ եկեղեցական գումարների հետ այլ ևս այդպէս անփոյթ չը վարվին և աշխատու կամայկամաց այդ փողերը ժողովել և դնել մի ապահով տեղը: Ղըլտեման վարդապետը, այստեղ գալով, մի նորութիւն մտրեց, այն է՝ հաստատեց հաշուեւորների պաշտօն, որը, կարծեմ, մեր յաջորդութեան մէջ ոչ մի տեղ չը կայ: Առհասարակ Արսէն վարդապետի գալը այստեղի եկեղեցական գործերը վրա լաւ ազդեցութիւն ունեցաւ, որով և զբաւեց համակրութիւն:

Ջլեցեան

ՆԱՄԱԿ ԽՊՐԱԳՐՈՒԹԱՆ

Խարկով, նոյնմբերի 8-ին
Արդէն ամենքին վաղուց շատ լաւ յայտնի է, թէ ինչպիսի աննեղիկ անտարբերութեամբ են վերաբերվում դէպի իրանց շքաւոր ընկերները, դէպի իրանց պարտականութիւնները երբեմն չըբաւոր ուսանող, իսկ այժմ չաղ պաշտօններ վարող անձինք: Մասնաւոր այս մասին շատ է գրել շատ է խօսել և զեռ շարունակում է ամեն մէկ յարմար դէպքում էլ թարգման հանդիսանալ ուսանողների արդար զարթոյթի դէպի այդ հրախտամու պարծնները և անդադար յիշեցնել նրանց՝ իրանց սրբազան պարտականութիւնները: Բայց,

մինչև վերջը, միւսն էլ հայոց Արշակունիների, սկզբից մինչև Պապ թագաւորը: Այս հատուածի մէջ թէպէտ նկատվում են բաւական տարբերութիւններ խորհանցու պատմութեան համեմատութեամբ: Բայց շատ և էական կէտերում նա համապայտանում է ընթանում խորհանցուն, և առհասարակ նկատվում է կապ՝ այդ հատուածի և խորհանցու մէջ:

Այն էլ յիշենք, որ այդ հատուածի սկզբում յիշվում է, թէ Տրդատ թագաւորի հրամանով Ազաթանգեղոս Մ ծր ի ն ու մ ար ճ ան ի վրա դրոշմել է հայոց թագաւորների տարիները, այդ արձանադրութիւնը յետոյ անցել է Մար Աբայ Մըծուրնացի (Մծրնացի) փիլիսոփայի ձեռքը, իսկ սրա աշակերտներից հասել է այն անձնաւոր հեղինակին, որ գրել է այդ պատմական հատուածը:

Գուտշիմ այս հատուածն անցողակի քննելով՝ կարծիք էր յայտնել, թէ դա նոյն ինքն խորհանցու գրածն է, իբր թէ խորհանցին այդ հատուածը գրել է ինչպէս ծրագրի իր պատմութեան համար, իսկ պատմութիւնը գրելիս՝ մասամբ հետեւել է այդ իր ծրագրին և մասամբ բարեփոխել ու փոփոխել է նրան: Նոյն միտքն աւելի վճառ-

կան կերպով արտայայտեց նաև կարրիէր, առանց սակայն նոր փաստեր բերելու:

Այժմ պրօֆեսոր Մարր այդ հատուածի մասնաւոր և բարեխիղճ ուսումնասիրութիւնից գալիս է միանգամայն նոր եզրակացութեան: Նա ապացուցանում է, որ այդ հատուածի հեղինակը խորհանցին չէ, և չէ էլ կարող լինել, այլ գաւզը վճար է խորհանցուց առաջ: Երիտասարդ հայագէտը ապացուցանում է, որ այդ հատուածի մի մասը (Ազաթանգեղոս արձանագրութիւնը) անցնում է մի անձնաւոր հեղինակի ձեռքը (սրան նա կոչում է Անանուս—ԱНОНИМЪ), որ իր կողմից նրան լրացնում է, աւելացնելով հայկազեան նահապետների վէպերը, որով հատուածը ստանում է ժողտրդապէս այն ծաւալը, որ այժմ գտնում ենք Սերէոսի սկզբում (թէպէտ տեղ տեղ նկատվում են դուրս բնկած կտորներ): Այս հատուածը յետոյ մի ուրիշի ձեռքն է անցնում, որին Մարրը կոչում է կեղծ Մարր Աբաս և նոր խմբագրվելով՝ ձեռնառու: Խորհանցին իր ձեռքի տակ է ունեցել այս հատուածի երկու խմբագրութիւններն էլ, թէ Անանուսին և թէ կեղծ Մարր Աբասինը, բայց վերջինին, որ մեզ չէ հասել, առաւելութիւն տալով՝ ամբողջապէս մըտ-

ցրել է իր պատմութեան մէջ, իր կողմից էլ յաւելումներ անելով:

Եթէ այս տեսակէտն ընդունվի—և դժուար թէ չընդունվի, գոնէ էական կէտերում—զուրս կը գալ, որ խորհանցու Մարր Աբասը առասպել չէ, նրա մտքը ծնունդը, յատուկ դիտաւորութեամբ կեղծված նախաձեռն, այլ յիշուի քերթողաւորն անցել է Մարր Աբաս անունով մի պատմական աղբիւր, որից աւել է այն, ինչ որ մենք գտնում ենք նրա պատմութեան սկզբում: Այս դէպքում խորհանցին մեղ կը հանդիսանայ ոչ իբրև խորհանցու, այլ զոր խորհանցութեան, այսինքն որ նա միամտաբար հաւատացել է «Մարրաբասին» ինչ որ սա գրել է թէ իր պատմութեան գիտի մասին (Վարդապետ, Նիսուէ և այլն) և թէ հայոց նախնական պատմութեան վրա:

Այնուհետև պ. Մարրը փորձ է անում քննել, թէ ով կարող է լինել յիշուի Անանուս հեղինակը և մի քանի հաւանական ցուցումներ մէջ բերելով՝ ենթադրում է, թէ գուցէ դա լինի Փաւստոս Բիւզանդը կամ աւելի ճիշդ խօսելով՝ Փաւստոսի պատմութեան հեղինակը: Զօրուածի վերջում պրօֆեսոր Մարր, ցոյց տալով, որ խորհանցու աղբիւրների մեծ և էական մասերը (Մար

Աբաս, Փաւստոս, Ազաթանգեղոս) ասորական մատենագրութեան հետ մտ կապ ունենա՞ բանասէրների ուշադրութիւնը հրախրում է՝ ուսումնասիրելու ասորական մատենագրութիւնն էլ, որ թերևս շատ բան պարզէ նոյն իսկ խորհանցու պատմութեան վերաբերմամբ, և չը բաւականանալ միայն յունարէն աղբիւրներով, որոնցից ծագած եզրակացութիւնները յամենայն դէպս միակողմանի և վաղաժամ կը լինեն:

Յոյց տալով երիտասարդ հայագէտի այս նոր աշխատութեան հիմնական կէտերը, որը նա աշխղութեամբ ապացուցել է՝ աւելորդ չենք համարում ասել, որ մեզ համար հատուկ չեն Անանուսի ուսումնասիրութեան մէջ մի-երկու կարևոր կէտեր, այսինքն, թէ «Եւրոպական պատմութեան» որ մասն է պատմական Անանուսին և և որը «Ազաթանգեղեան արձանագրութեան», նոյնպէս և այդ պատմութեան երկու ժամանակագրական ցանկերի սկզբնական ձևը վերականգնելու փորձը:

Գուցէ ուրիշ տեղ մենք աւելի ունենանք մեր կարծիքը մանրամասն յայտնելու այդ խնդիրները մասին:

Ստ. Մ.

ինչպէս երեւում է, այդ պարունակը լսելու, հասկանալու և մանաւանդ զգալու ընդունակութիւնը...

Ուրեմն այժմ պէտք է զիմել աւելի կոշտ ու կոպիտ միջոցներ, որ անմիջապէս ներգործեն այդ պարունակի խրատական իմաստը...

Մասնաւորելով խօսքը, պէտք է յայտնենք այն հայերին, որոնք ժամանակին վայելել են իրանց հայրենակցներին և ընկերներին կողմնակից դրակցած ժամանակութիւնը...

Ինչպէս որ ասում է Մարտիանոսը, որ անհասկանալի է զայնքան, որ անհասկանալի է զայնքան, որ անհասկանալի է զայնքան...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՈՒՐ

Երէկ, նոյեմբերի 14-ին, Նորին կայսերական Մեծութեան Թագաւոր կայսր Նիկոլայ II-ի պատկառութեամբ առիթով քաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ գիշերը շքեղ լուսաւորութիւն կար:

Երէկ, նոյեմբերի 14-ին, Նորին կայսերական Մեծութեան Այրի Թագուհու կայսրուհու ծննդեան օրը Միսի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցվեց և ապա մաղթանք կատարվեց: Մաղթանքին ներկայ էին կովկասի կառավարչապետի օգնական կոմս Տատիչևը, բոլոր գեներալները, զինուորական և քաղաքացիական վարչութիւնների բոլոր ներկայացուցիչները և բազմաթիւ հասարակութիւն: Վանքի մայր եկեղեցում ևս, հայոց ամբողջ Վաղարշապատի թանգարանը մաղթանք կատարեց՝ բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ:

Կ. Պոլսի մեզ գրում են նոյեմբերի 6-ից Վրաստանի կրթութեան նախարարի հայ գիւղերուն մէջ սովից մեռած մարդիկ զտնված են: Կառավարութիւնը այդ ժամին լուծութիւն կը պահանջէ: Տեղեկութիւնները վաճառականներու նամակներով կը ստացվին: Լրագիրներին արգելված է սովի մասին գրել, այլ մի մի անգամ կը հարցովի, թէ հունձի պակասութիւն է:

Մեզ հարցում են, որ վեհապետ կաթողիկոսը զիմել էր Պետերբուրգի կայսերական Հնագիտական Յանձնաժողովին խնդրելով մի մասնազետ ուղարկել Էջմիածին թանգարանը կարգի դնելու համար: Կայսերական Հնագիտական Յանձնաժողովը, յարգելով վեհապետի խնդրը, առաջարկեց կարգի հանդիսական թանգարանի զիմելու համար Էջմիածին: Այս օրերս կէրէի հնագիտական թանգարանի զիմելու թիֆլիսցիները, այստեղից ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին:

Սասունի մասին մեր թղթակցներէն մէկը, ականատեսներէն քաղելով, հարցում է հետեւեալը. «Ականատեսներէ պատմելով, դեռ սասունցի-

ներկ կէսից աւելին մնում է, բայց անտուն, անտեղ, որովհետեւ գրեթէ ոչ մի գիւղ և ոչ մի տուն առանց այրվելու չէ մնացել: Ամբողջ Սասունում, որ բաւական հարուստ գիւղեր է ունեցել՝ հակառակ ընդհանրապէս տարածված կարծիքի, այժմ չը կայ ոչ մի այժ, ոչ մի օջաւոր, ոչ մի կով, մի խօսքով ոչ մի անայն կենդանի, բոլորն աւարի են մասնով: Սակայն այդ ժողովուրդը դեռ յոյսը չէ կորել:

Ստացանք թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան մի նոր հրատարակութիւնը, Եւքսպիւրի «Համալս» ողբերգութեան հայերէն նոր թարգմանութիւնը, որ կատարել է անգլիերէն թարգմանիչ Յովհաննէս-Խան Մասէհան: Որովհետեւ թարգմանութիւնը կատարված է չափական լեզուով, ուստի թարգմանիչը, ինչպէս յայտնում է առաջաբանի մէջ, աշխատել է գտնել մի այնպիսի չափ, որ փոքր ի շատե՛լ յարմարելու Եւքսպիւրի ոճին և այդ չափը, որ բոլորովին նման է Ֆրանսիական աղբիւրների չափին, նա վեր է առել գործածական ժողովրդական երգերի միջից, մի չափ, որով զբով է, օրինակ, «Կուռնի, ուստի կուգաս» ժողովրդական երգը: Թարգմանութեան լեզուն ընդհանրապէս գեղեցիկ է և, եթէ ի նկատի ունենանք, որ առհասարակ Եւքսպիւրի թարգմանելը դժուար գործ է, պէտք է ասենք, որ ներկայ թարգմանութիւնը հայոց գրականութեան մէջ եղածներից ամենաաջողվածն է: Գրքի տպագրութիւնը մտքոր և գեղեցիկ է: Գրքի գինն է 75 կոպ:

Անցեալ անգամ հարցուցինք, որ կառավարութիւնը թող է տուել թիւրքաւոր գաղթականներին այս ձեռք էլ մնալ կովկասի սահմաններում: Այդպիսով այդ դժբաղդներին կերակրելու և օգնելու պարտաւորութիւնը էլ ընկնում է առաջապիւրի վրա: Մենք յայտնում ենք, որ մեր հասարակութիւնը, որ անցեալ տարվայ սկզբին մօտ 100 հարզար բոլորի ներքին գաղթականներին օգնելու համար, այս ձեռք ևս պատուով կը կատարէ իր վրա դրած այդ բարոյական պարտաւորութիւնը: Հրատարակելու ենք կարսի մեր թղթակցներին, որտեղ գլխաւորապէս կենտրոնանում են գաղթականները, հարցուցել մեզ թէ ինչ գրութեան մէջ են այս բոլորի գաղթականները: Մենք կը շարունակենք հանգանակած գումարները ուղարկել կարս, եթէ կարիք լինի:

Մեզ հարցում են, որ Շուշու թեմական դպրոցի բարձր դասատան աշակերտներից շատերը թիֆլիս գալով, խնդրեց են տուել Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան՝ Ներսիսեան դպրոցը մտնելու համար: Հոգաբարձութիւնը, հիմնվելով իր ընդհանուր վճար վրա, յայտնել է խնդրատուներին, որ կարող են մտնել դպրոցը քննութիւն տալով:

Եւրոպական մամուլը, մանաւանդ անգլիական լրագիրները նորից սկսել են խօսել թիւրքաւորացի հարցի մասին, այն սովակալի դէպքերի պատճառով, որ այժմ տեղի են ունենում թիւրքացի Հայաստանում:

Եւրոպական մամուլը, մանաւանդ անգլիական լրագիրները նորից սկսել են խօսել թիւրքաւորացի հարցի մասին, այն սովակալի դէպքերի պատճառով, որ այժմ տեղի են ունենում թիւրքացի Հայաստանում:

Խորեն կաթողիկոսական գիւնապետի պաշտօնը, հրաժարական տալով այդ պաշտօնից, եկել է թիֆլիս, և այստեղից պէտք է գնայ Ս. Խաչի վանքը, ուր մի ժամանակ վանահայր էր: Ետ ցաւալի է, որ Ստեփանէի նման բարձր ուսում ստացած և եւանդուն հողորականը ստիպված է քաշվել մի հեռաւոր վանք, իբրև վանահայր, մինչդեռ ժողովրդի մէջ, հայաբնակ թեմերում արժանաւոր հողորականներ չը կան:

Ներքին գործերի մինիստրութեան մէջ, ինչպէս յայտնի է, մշակվում է գիւղական ինքնակառութեան վերաբերեալ օրէնսդրութեան վրա մի բանի էական յաւելումներ անելու հարցը: Ներկայումս գիւղական ժողովները կարգի բերելու վերաբերեալ կանոնների նախագիծը մշակված է, և ինչպէս լսել են մայրաքաղաքի լրագիրները, ներքին գործերի մինիստրը առաջարկել է պետական խորհրդի քննութեանը: Այդ նախագիծով, մինիստրութիւնը, ի միջի այլոց, հարկաւոր է համարում գրկել գիւղական ժողովներին մասնակցելու իրաւունքից զրոյութեան մէջ բանված, արբեցող և առհասարակ վատաբարոյ մարդկանց, որոնք հարկերը ճշգրտութեամբ չեն վճարում:

Չորեքշաբթի, մեր թղթակցից Ա. Ուրեանց ուղարկել է մեզ հետեւեալ արդարացի նկատողութիւնը տպագրելու համար. «Մշակիչ» № 125-ի մէջ տպած 1-ի «Գրական երեւոյթներ» յօդուածը շատ կարգաւորող տպագրութիւն է թողնում: Նա մի գեղեցիկ ապացոյց է այն բանին, որ հասարակական գրական կարծիքը մեր մէջ այնքան հասունացել է ինքնուրոյնացել է, որ նոյն իսկ պրոֆեսորներն էլ կայծակ և որոտ արձակող յօդուածները նրան չեն խռովեցնում... Մի րօպէ կանցնելով և ականջ դնելով այդ թղթակցի վանքերին, հասարակական գրական կարծիքը, ներշնչված իր սեփական արժանաւորութեան զգացումով՝ արձամարձանքին է միայն արժանացնում նրան և անվրդով անցնում: Ճիշդ է, խնդիրը ունի և իր ցաւալի կողմը, այդ այն է, որ պրոֆեսոր մարդիկ կարող են շատ անգամ շատ անհիմն մտքեր յայտնել և պաշտպանել, բայց չէ որ այդ հանդամանքը հասարակութեան համար արդէն գաղտնիք չէ: Միւս կողմից ճիշդ է, ինքնասիրութիւնը պահանջում է, որ մարդ խօսի և զբաղեցնի հանդիսականներին իր մտքերով միայն այն ժամանակ, երբ յարուցված խնդրի վերաբերեալ մի ինքնուրոյն և խելացի բան ունի ասելու: Բայց չէ որ այդ հանգամանքը շատ շատերի համար պարտաւորական չէ դարձել վաղուց ի վեր: Այսպէս թէ այնպէս, սակայն պրոֆեսորին յայտնած անաջող զանազան համարութիւնները մի կողմից՝ և 1-ի առարկած ճամբար գիտողութիւնները միւս կողմից՝ գեղեցիկ և ուժեղ ապացոյցներ են, մեր կարծիքով, այն հանգամանքի, որ հասարակական գրական կարծիքը մեր մէջ գտնվում է արդէն իր անընդհատ զօրեղանալու շրջանի մէջ: Իսկ դա անպայման ուրախացուցիչ երեւոյթ է:»

Եւրոպական մեզ գրում են. «Ամսիս 5-ին ճեմարանից արձակվեցին էլի երկու աշակերտներ: Արձակվեց նոյնպէս վերակազմներից մէկը՝ Ա. Արշակունին:»

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵԹԻՅ մեզ գրում են նոյեմբերի 9-ից «Նոր-Բայաջեթի զինուորական առանցք բաց արեց իր նիստը ամսիս 5-ին և վերջացրեց 8-ին: Կանխված էին երկու հասարակութեան՝ Աղղերբուր, Գալղարաբաշու և Նոր-Բայաջեթ քաղաքի 1873 թ. ծնված երիտասարդները—բոլորը 225 զինուորացուները: Ամսիս 5-ին ընդունվեցին գանգատարները և զինուորական մասնախմբերը վերաստուգվեցին: 6-ին վիճակահանութիւնն էր, իսկ յաջորդ օրը բժշկական քննութիւն: Երբ նիստը փակվեց, առեանի նախագահ գլխաւոր Գորախէն յայտարարեց՝ որ ընդունված են ծառայութեան մէջ 30 զինուորներ և 4 կանդիդատներ, որոնցից 12 հօգի քաղաքացի են: Արեանի նախագահը մի և նոյն ժամանակ յայտնեց, որ նոր կանոնով հասարակութիւնը ազատվում է այն ընտանիքի վճարելիք տարեկան հարկից, որի անդամներից մէկը զինուորական ծառայութեան մէջ է: Չինուորները կուղևորվեն Երևան նոյեմբերի 11-ին եթէ համեմատեալ առաջին տարիները վերջին երկու տարիների նետ, կը տեսնենք, որ այժմ համարեալ ուրախութեամբ են ծնողները ուղարկում իրանց որդիներին զինուորական ծառայութեան, մինչդեռ սկզբում սարսափում էին այդ ծառայութեանը:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԳՈՒՆ-ՐԵՋԱԿ-ԲԵՅ ԼՕՆԻՕՆՈՒՄ

Կ. Պոլսի «НОВОСТИ» լրագրի թղթակցից, ի միջի այլոց, գրում է հետեւեալը. «Կ. Պոլսում շատ զո՞ են առօրաց կառավարութիւնից այն բանի համար, որ նա քննեց թիֆլիսից Պետերբուրգի թիւրքացի դեսպանութեան նախկին առաջին քարտուղար Աբդու-Րէզակ-բէյին, որը հեռացել էր Կ. Պոլսից թշնամական դիտաւորութիւններով: Թիւրքացու քաղաքի իր պապի անունից (նրա պապը, Բեդր-խան-փաշան, քերական գրեզ գեղարպետ էր, որը մինչև այժմ ևս մեծ յարգանք է խառնակութիւններ առաջացնել թիւրքաց պետութեան ասիական այդ մասերում:»

Ներկայումս Բ. Գուրը կատարելապէս հանգստացաւ այդ կողմից: Աբդու-Րէզակը, ԼՕնդոն հասնելով, գրեց Պետերբուրգ,—ուր նա կապ ունի

բարձր շրջանների հետ,—մի բողոք իրան քննուղէմ Աբդու-Րէզակը երեւի ստիպված կը լինի ԼՕնդոն մնալ, մինչև որ սուլթանը ներումն կը նորոհի նրան:»

ՉԻՆԱ-ԵԱՍՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԳՄԻ

Հիւսիսային հեազարկան գործակալութիւնը հարգեց արդէն, որ հապոնացիները, առանց զիմարութեան, գրաւեցին Պորտ-Արտուրը: Չինա-եաստոնական պատերազմի սկսվելու օրից հապոնացիները համարեա ամեն կէտերում և ամեն դէպքում ջարդում են չինացիներին, որով կրկին անգամ հաստատվում է այն պարզ ճշմարտութիւնը, թէ քաղաքակրթութիւնը միայն յաղթող կր լինի ազիտութեան և նախապաշարմունքի վրա: Չինաստանից արդէն սպառնալի և անձնատուտ տեղեկութիւններ այլ ևս չեն ստացվում: Չինական գործի քաղաքական և թուրքական պատճառով:

Նիւլիանցում ամեն օր հարկաւոր փախստականներ են գալիս, և վախենում են, որ ուտեղեցիների պակասութիւն կարող է լինել և մինչև անգամ սով: Չինացիները ստիպված են այժմ կռուել ոչ միայն հապոնացիների դէմ, այլ և իրանց ծովային աւազակների դէմ: Միւս կողմից եւրոպացիներն ևս սկսում են բժանդիր դառնալ դէպի չինացիները: Անգլիական զրօշակի տակ դեացող «Շուսո—Կինգ» նաւի վրա նոյնպէս յարձակվեցին ծովային աւազակները, աշխատելով գերի բռնել նաւի վրա գտնվող հապոնական հիւպատոսին: Անգլիական կառավարութիւնը մի ուղիով ստում ուղարկեց, որով ետի օր ժամանակ էր տալիս՝ այդ գործը կարգաւորելու համար: Բացի դրանական վարձատրութիւնից, Անգլիան պահանջում էր պաշտօնակ անել մի քանի պաշտօնականներին և 21 թնդանօթածուրթեամբ պատիւներ տալ «Շուսո—Կինգ» նաւին: Անամաձայնութեան դէպքում, անգլիացիները սպառնում էին խիստ միջոցներ զիմել իրանց նաւատորմի միջոցով: Բոլոր այդ պահանջներին բաւարարութիւն տրվեց:

Վերջապէս, նշանաւոր է այն տեղեկութիւնը, թէ չինացիները պարտաւոր են խաղաղութիւն խնդրել: Տեսնալով իրենց հաւաքված էին օտար պետութիւնների ներկայացուցիչները, և պրինց Կուսից, ժողովում առանց ծածկելու յայտնեց, թէ Չինաստանը այլ ևս անգոր է զիմարել հապոնացիներին: Չինաստանը, ասեց պրինցը, պարտաւոր է հրաժարվել Կորէյի վրա ունեցած իր իրաւունքներից և պատերազմական տուգանք վճարել: Մի և նոյն ժամանակ Չինաստանի ներկայացուցիչներն ևս օտար պետութիւններում զիմեցին պետութիւններին խնդրելով միջամտել պատերազմում: Սակայն ըստ երևոյթի, եւրոպական պետութիւնները յարմար չեն համարում մի այնպիսի միջամտութիւն: Մինչև անգամ Միացեալ-Նահանգները, որին Չինաստանը զիմեց առանձին խնդրերի համաձայնութեան: Եւրոպական կառավարութիւնը մեր կարծիքով չափազանց թշնամաբար է վերաբերվում եւրոպական պետութիւնների միջամտութեանը:

Ինչ որ վերաբերվում է խաղաղութեան պայմաններին, հապոնացիները պահանջում են Չինաստանից՝ կատարելապէս հրաժարվել Կորէյի վրա ունեցած իրաւունքներից, պատերազմական տուգանքի վճարումն, հապոնական զորքերով վերջու քաղաքի գրաւում: Չինաստանի հաշուով, մինչև որ կը վճարվի պատերազմական տուգանքը և Պորտ-Արտուրի ու վէյ-խէյ-վէյ գրաւումը մինչև այն ժամանակ, երբ Կորէյան բաւականաչափ զօրք կունենայ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրից, հոկտեմբերի 23-ին

Մուշ սով կայ. հայերը քաղցից կոտորվում են. իսկ կորովի սասուցեք յաղթահարելով ամեն տեսակ արգելքների, չնկճուելով և իտ մղելով թշնամու անդ գործը, այսօր քիչ է մնում կամաւ թողնել հայրենիքի ազատ լեռները, սիրելիների արիւնով գնած վայրերը և, ի նախատինս ամբողջ հայրենիքն իտնարվին սովի առաջ, բաշտաբողկները ու համրեղենից աւելի կատարել այդ թշնամու առաջ:

Այո, մենք, թարգմանիչներս էլ գիտենք, լսել ենք այդ բոլոր և այնքան էլ անտարբեր ու անզգայ չենք. եթէ մեր կանայք չեն խնայել իրենց արկղիկների անկիւններում տարիներով պահած ժանգոտ կուպկները...

Խեղճերը ամեն խնդրանքներ օտարի տակ տալով, սպիտակ խաւար քոջը պատահելով, ամառնային խաչող տօթերին դռնէ-դռու ընկան, հազար ու մի տեսակ ծաղրու ծանակի, կծու նախատիքների ու կշտամբանքների ենթարկվեցին...

Ելմիածնում, յանուն սովեակների հաւարած փողերից մի հազար բուրբի մայիսին այստեղ առաջնորդին ուղարկվեց, որպէս զի բաժանվի Աղբակից Սալմաստ եկած զաղթականներին...

Այս բոլորը մեր աչքերով տեսնելուց յետոյ, այլ ևս ինչ սրտով հանգանակութիւն բանայինք: Եւ միթէ այն առատաձեւն նուիրատուները բոլորն էլ չեն զղջացել: Այդպիսի պայմաններում ընթացնում են մարդասիրական զգացմունքները...

Թիֆլիսի լրագիրներից մէկը, որ անդադար չիմծու ընկալմանը է տպագրում, տպագրել է մի լուր թէ՛հրանից, բայց անկասկած թաւրիցի գրում, որ իբր թէ այստեղի առաջնորդի դիմումներով տեղական Քեար-Վուզարին պաշտօնանկ են արել: Սակայն այդպիսի մի չիմծու լուր տպելով առաջնորդին ծաղրի առարկայ են դարձնում, որովհետև ամենքն էլ գիտեն, որ Քեար-Վուզարին պաշտօնանկ անել տուողը զլիսաւորապէս անզլիական հիւպատոսն է, որին վերջերս ձայնակցեց և առևտայ հիւպատոսարանը, ի նկատի ունենալով որ այդ Քեար-Վուզարը կապված է եղել տաճիկների հետ և բազմաթիւ զեղծումներ է գործել: Մենք այնքան միամիտ չենք, որ կարծենք թէ Սուրխաւ արքայիսկուպուրը ընդունակ է մի բարձր պաշտօնեայի պաշտօնանկ անել տալ: մենք շատ նորակալ կը լինէինք, եթէ նա իրան այնպէս պահէր, որ գոնէ հայոց առաջնորդի թէ՛հրան ա-

րած դիմումները լրորովին առանց պատասխանի չը մնային...

Մ Ե Ա Կ Կ Ե Ն Ե Ր

Մ Ե Ա Կ Կ Ե Ն Ե Ր

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 նոյեմբերի: Թագաւոր կայսրի Մեծ Խլխանութի Ալեքսանդրա Ֆէոդորովնայի հետ ամուսնութեան ցերեմոնիայի համաձայն, հանդիսի օրը կը հաւարվին Չմերային պալատում բարձր հոգեբարակաւորութիւնը, բարձրաստիճան պաշտօնեաները, Բարձրագոյն Աբրուսիքի անձինքը, գեներալներ, շտաբ և օրէր-օֆիցերներ, զիպումատիական կորպուսը, պատաւոր վաճառականները: Հանդիսաւոր ընթացքին կը մասնակցեն Գանիայի և Յունաստանի թագաւորները, Հէսսէի մեծ դուքսը, Սաքսէ-Կորոթը Գոթայի դուքսը, Ռէյխի, Ռուսիական, դանիական և Բուրգէի պարիցները, յունաց արքայադուին, Եթովի դուքսը, պրուսական Հէնրիխ պրինցը: Պատկազորութիւնը վերջնապէս յետոյ Նոյն կայսրական Մեծութիւնները հանդիսաւոր կառքով կը դնան կազանի տաճարը և կարճ մաղթանք լսելուց յետոյ կերթան Անիկով պալատը:

10 ՆՊՕՆ, 11 նոյեմբերի: Պորտ-Արտուրի ու մարկոսի չէ դադարում. եսպոնացիները չորս անգամ յարձակում գործեցին. առաջին յարձակման ժամանակ չինական առաջապահ զնդերը ընկնելիցն, իսկ մնացած երեք անգամները եսպոնացիք յետ մղվեցին:

ՀՌՕՔ, 11 նոյեմբերի: Pellicrina sant Eifesa Sinapoli և sant Procopio աւերակների կոյուր են ներկայացնում երկրաշարժից յետոյ վիրաւոր վաճանքը և այլանդակվածները ընկած են գետնի վրա:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 նոյեմբերի: Բարձրագոյն հրամարիւմ է՝ նոյեմբերի 14-ին, այն օրը, որ նշանակված է Նորին կայսրական Մեծութեան պատկազորութեան համար Նորին Բարձրութիւն Մեծ Խլխանութի Ալեքսանդրա Ֆէոդորովնայի հետ, հաւարվել Չմերային պալատը առատառեան 11 1/2 ժամին մօտ:

Երէկ, ցերեկվայ 3 ժամին, ներկայացաւ Թագաւոր կայսրին սենատը բոլոր սենատորներով և օրէր պրոկուրորներով, արդարադատութեան միջնատրի և նրա օգնականի ներկայութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 12 նոյեմբերի: «Militaer wocheblatt» հայտարարում է, թէ յայտարարված է, որ Նիկոլայ կայսրը Ալեքսանդր կայսրի անունը վերադրելով գրէնադերեան գնդի շէֆ է նշանակված:

10 ՆՊՕՆ, 12 նոյեմբերի: Զորքաւորները, 18 ժամ տեղ կուսից յետոյ, եսպոնացիները գրաւեցին Պորտ-Արտուրը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 նոյեմբերի: Այսօր, կէսօրից յետոյ երեք ժամին, Չմերային պալատի Նիկոլանիան դաշխումը դանազան նահանգների ազնուականութեան, քաղաքային վարչութիւնների, զէմստոյօի, վաճառականութեան, մէլչանների, արհեստաւորների, Պարիզի առևտայ կործնիայի, Մակվայ ստարոբրադիցիների և ճարտիկան նահանգի կարախների կողմից Պետերբուրգ եկած պատգամաւորութիւնները ներկայացան Թագաւոր կայսրին: Բոլոր պատգամաւորութիւնները թիւն էր մօտ 116. Թագաւորը պիւտորաձեւեան գնդի զընդապետի համազգեստ ունեւ հազար՝ Անդրէկիան ժապաւէնով: Ներքին գործերի միջնատրը ներկայացնում էր պատգամաւորութիւնները կայսրին: Նորին Մեծութիւնը պատգամաւորներից շատերին հարցուկորձ արտւ և արժանացրեց իր խոսակցութեանը:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 նոյեմբերի: Թագաւոր կայսրը, սենատը ընդունելու ժամանակ, ստեց. «Պարտններ, իմ հանգուցեայ հօր անունից նորահայտութիւն եմ յայտնում ձեզ ձեր աշխատութեան համար: Ես հաւատացած եմ, որ իմ ժամանակն ևս սենատը իր գործունէութեան մէջ կը ղեկավարվի միմիայն արդարութեամբ և օրէնքով:»

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 14 նոյեմբերի: Այսօր կատարվեց Թագաւոր կայսրի պատկազորութիւնը Գեոն ևս ամբողջից լսվում են վերջին թիւղանթածութիւնները, որ աւետում են ուրախայի անցքը: Թողովուրդը խանդում է փողոցներում:

10 ՆՊՕՆ, 14 նոյեմբերի: Այսօր վինգորում թագուհին մեծ բանկէտ է տալիս ի պատիւ Ռուսաց կայսրի պատկազորութեան:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՄԱՆՈՒՐ Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՍԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է, Թիֆլիս, կենտրոնական գրաւաճառանոցում:

Գ Ա Ր Ի Է Լ Ա Ռ Ա Բ Ե Լ Ե Ա Ն Ի Ա Մ ՈՒ Ս Ն Ա Կ Ս Ն Տ Ա Ր Ա Գ ՈՒ Ս Ա Ն Բ Ն Ե Ր

Մի երես կէկեցողական իրաւաբանութիւն-վից. Բ. 1894 զինը 50 կ. ձանապարհա-ճախս 15 կոպէկի (№ 127) 3-5 սոււն:

Դ Պ Ր Ո Ց Ե Ի Պ Ա Ն Ս Ի Օ Ն

Վ. Ի. Տ Ե Ր - Յ Ո Վ Ս Է Փ Ե Ա Ն Ի (Սօլալի, Սարգոլայ, Սերգիեվկայա փողոց, Յէր-Մէլիքստովի տան հանդէպ, № 46) կովկասեան Ռուսաւորանական Շրջանի պ. Հողարարձուի Թոյլաւութեամբ, այս տարվայ սեպտեմբերի 3-ից բացվում է զպրոց պանսիօնով (տղաների համար): Կարողուցում ընդունվում են երկես մանուկներ պատրաստելու համար նրանց մանկու կառավարչական միջնակարգ դպրոցները: Պայմանների մասին հարցնել պանսիօնում: (№ 130) 3-6

Հեռ-ԱՌՍՍ № 104 Մ. Բ. Ս Ա Փ Ա Ր Ե Ա Ն Ի

Ծ Ի Ա Խ Ո Տ Ի Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ը Թ Ի Ֆ Լ Ի Ս ՈՒ Մ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թւին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—ԱՆՄՈՎԵՐԱԿԷՆԻ, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՌՈՐ ՊԱՐԳԵՆԵՐԻ—Լ Ի Օ ՚ Ի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած Ը Ն Տ Ի Ր Պ Ա Պ Ի Ր Օ Ս Ն Ե Ր «Капризъ» 25 հատը 15 կոպ. «Рекомендационныя» 10 հատը 5 կոպ. «Театральныя» «Флора» 10 հատը 3 կոպ. «Экономныя» կարելի է առնել գործարանից և իսկական ծիւղախոտալաճանների մօտ: Ուղարկելու ծախսը գործարանի վրա է: (№ 104) 0-18

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Ե Ի ՊԱՆՍԻՕՆ

Տ Ե Ր - Ա Կ Օ Պ Օ Վ Ի Ընդունում է երթևեկներ, կիսագիշերօթիկներ և զիշերօթիկներ: Սօլալի, Գանսիւ-կայա փ. № 11. (№ 127) 5-10

НѢМЕЦКАЯ ГОСТИНИЦА

HOTEL NIEMECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոսրեր, որոնց սալը ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենականերին է նման: Նոսրերի զինը 50 կոպէկից մինչև 3 բուրբի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն «Մշակ» և «Նոր-Գար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ընտարան, տեղի-օտ, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ: Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում: (№ 21) 107-130 (2)

Advertisement for a piano. Includes an illustration of a grand piano and text: «Ա. ԿՕՊՊԻ Տ Օ Ր Տ Է Պ Ի Ա Ն Ն Ե Ր Ի Խ Ա Ն ՈՒ Թ ՈՒ Մ» (Միջալեկան փողոց, № 132) Կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 բուրբուց մինչև 450 բուրբի արժողութեամբ: (№ 119) 8-25

Ազգին Վեհապատ Հայրապետը հրամայել է գործադրել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ Սարգիս քահանայ Բէգնազարեանցի աշխատանքում

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Բ Ր Ի Ս Տ Ո Ւ Է Ա Կ Ա Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Դ Ա Ս Ա Գ Ի Ր Բ Ը

Յայտնելով այս ի զիտուութիւն զպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ զիմել ուղղակի այս հասցեով. Թիֆլիս, Երկաւեան փողոց, տուն № 45, աշխատանքողի այրին:

Կիրքը կազմած է և արժէ՛ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) զպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներին ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.: ձանապարհաճախսը գնողների վրա է: 22-25 (№ 81)

ՄԻՋՈՑ ԽՍՐԲՈՒԽԻ ԴԵՄ

«Ольгафакториямъ Нуделинъ» М. А. ЖИРМУНСКАГО.

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ Ծախվում է 40 կոպէկով

Գեղազոլ ծախան Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս սոււն: № 128 (91 թ.) 38-40